Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ, Վ. Բ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅ ԴԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԱԹՅԱՆ ՄԵՋ

Հայկական գաղթավայրերն ունեն մեծ ու հետաքրքիր պատմություն։ Նրանց առաջացումն ու զոյատևումը մինչև մեր օրերը հանդիսանում է հայ ժողովրդի պատմական զարգացման ուշագրավ ու կարևոր առանձնահատկությունը, որը պայմանավորված է եղել Հայաստանի տնտեսական ու քաղաքական զարգացման մի շարք յուրօրինակ հանգամանքներով։

Հին աշխարհի առաջավոր երկրներից մեկը՝ Արևելքի ու Արևմուտքի ճամփաները հանդուցող Հայաստանը դեռևս վաղ միջնադարում սերտ առևտրական-տնտեսական հարաբերությունների մեջ էր Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի քաղաքակիրթ երկրների հետ։ Հայ վաճառականներն ու իշխաններն իրենց ապրանքներն ուղարկում էին վաճառաշահ քաղաքները, այնտեղ ձեռք բերելով սպառման ու առևտրի համար անհրաժեշտ առարկաներ, հաստատելով մշտական կապեր, ստեղծելով սեփական առևտրական տներ, ֆակտորիաներ։ Հայ իշխանների զորքերը մասնակցում էին այլ պետությունների պատերազմներում, որոնց ավարտից հետո երբեմն այլևայլ պատճառներով տուն չէին վերադառնում, մնում և հիմնավորվում էին հեռաստաններում, ստանալով ինքնավար համայնքի իրավունքներ ու արտոնություններ։

Այդ գաղթավայրերը դառնում էին հանգրվաններ, որտեղ հետագայում ապաստան էին գտնում սովից ու յաթաղանից հալածված փախստականները, հայրենիքից հեռացած պանդուխտները, օտար հորիզոններում ապրուստի միջոց և բախտ որոնողները։

Հայ գաղթավայրերի բազմացումն ու մեծացումը, սակայն, պայմանավորված էր ոչ թե այս ու նման մասնակի հանգամանքներով, այլ աշխարհավեր ասպատակությունների, բարբարոս ցեղերի պարբերական հարձակումների, անհավասար ուժերի դեմ մղված ծանր պատերազմների և հատկապես հայ պետականության անկման և օտար տիրապետության հաստատման հետևանքով սկսված հայության զանգվածային արտագաղթերով ու բռնագաղթերով։ Մերձավոր արևելքի միջնարերդ հանդիսացող Հայաստանը սելջուկների, թաթարների, ապա թուրք-պարսկական բռնապետության ներքո ևս դարձավ արյունահեղ կռիվների թատերաբեմ։ Այդ է պատճառը, որ հետագայում էլ գաղթը մնաց որպես հայոց պատմության օրինաչափ առանձնահատկություն։

Արտագնացության ուղի էին բռնում բնակչության գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչները և, իհարկե, առավելապես նրանք, որոնք ստիպված էին իրենց կյանքը փրկել վերահաս վտանգից ու հնարավորություն ունեին օտար հողի վրա գտնել գոյության միջոցներ։

Հայրենիքը թողնում էին առաջին հերթին երիտասարդները, արհեստավորները, աշխարհին լավածանոթ վաճառականներն ու նրանց գործակալները, որոնք ապահովված էին հետագա գործունեության անհրաժեշտ միջոցներով։

Այսպիսով, գաղութներում հավաքվում էին բնակչության առավել ձևոնհասից, ունևոր և գրագետ տարրերը, ինչպես, իհարկե, նաև ավերված շրջանների բնակչության ամբողջական զանգվածները, որոնք և գառնում էին նորաստեղծ համայնքների բազմախավ հիմքը։

Հայ գաղութները կենդանի կապ էին պահպանում հայրենիքի հետ, որտեղ թողել էին իրենց տունն ու հարազատներին և ուր վերադառնալու հույսն ապրում էր բոլորի սրտերում։ Գաղութները մշտապես հոգում էին հայրենի երկրի մասին, նրան հասցնում նյութական ու բարոյական օգնություն, պայքարում նրա ազատության համար։

Ֆեոդալիզմի մռայլ ժամանակաշրջանում, երբ Հայաստանը ենթարկված էր օտար տիրակալների իշխանությանը, երբ օրենքը փոխարինված էր կամայականությամբ, երբ լկվում էր մարդը, ոտնակոխ արվում նրա արժանապատվությունը, արհամարհվում լեզուն, մշակույթն ու հավատը, երբ կործանվում էին ստեղծագործ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանները..., գաղթավայրերում ոչ միայն պահպանվում էր հայկական տարրը, նրա ազգային կերպարանքը, այլև զարգանում էին ազգային գիրը, գրականությունն ու արվեստը, ստեղծվում էին դպրոցներ, սկրիպտորիումներ ու տպարաններ, ապա և թատրոն, թերթ ու հանդես։ Հայ մշակույթը բեղմնավորվում էր հարևան երկրների մշակույթի ազդեցությամբ, ազդվում ու ազդում, նպաստում ժողովուրդների փոխըմբռնմանը, մերձեցմանը և համագործակցությանը։ Բավական է հիշել Լվովն ու Աստրախանը, Զրիմն ու Նոր Նախիջևանը, Վենետիկն ու Վիեննան, Պոլիսն ու Ամստերդամը, Մադրասն ու Ջուղան, որպեսզի պատկերացում կազմվի հայոց պատմության քառուղիներում գաղթավայրերի կատարած դերի մասին։

Այսպիսով, գաղութների կյանքն ու պատմությունը սերտորեն կապված է եղել հայրենիքի հետ, դարձել նրա անբաժանելի ու կարևոր մասը։ Առանց գաղութահայության պատմության ուսումնասիրության անհնար է հայ ժողովրդի համակողմանի ու ամբողջական և գիտական պատմության ստեղծումը, քանի որ դարեր շարունակ երկրից դուրս են գտնվել ոչ միայն հայության հրկայական հատվածները, այլև տնտեսական ու քաղաքական կյանքի կենտրոնները, մշակույթի օջախները՝ դպրոցները, տպարանները, թերթերը...։

Թեպետ գաղութների պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը հասկանալի է եղել մեր ժողովրդի գիտական պատմության ամբողջականացման համար, թեպետ սկզբնաղբյուրները շատ են ու բազմերանգ, ցավով պետք է նշել, որ գաղութահայության անցյալն ու ներկան մինչև վերջին տասնամյակներն իրենց պատշաճ տեղը չեն գրավել սովետահայ պատմագրության մեջ, իսկ կատարված աշխատանքը անբավարար է եղել՝ ինչպես թեմատիկայի ու աղբյուրների ընդգրկման տեսակետից, այնպես և պատմագիտական ուսումնասիրության մակարդակով։

Այս վիճակն առավել ևս անհանդուրժելի է, քանի որ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունն ունի բավական հարուստ և հին ավանդներ։ Դեռևս միջնադարում գաղութների մասին գրել են իրենք՝ գաղութահայերը, ստեղծել հանդամանալի ժամանակագրություններ և ուղեգրություններ, անգամ գրել պատմական երկեր, որոնք ինչքան էլ պարզունակ ու միտումնավոր այնուհանդերձ հնարավորություններ են ընձեռում լրջորեն անդրադառնալու բարձրացված խնդիրներին։ Հիշենք թեկուզ մեկ օրինակ՝ միայն լեհ-

ուկրաինական գաղութների մասին XVII դարում ստեղծված երկերը, որոնցում իրենց արտահայտությունն են գտնում գաղութահայ կյանքի զանազան կողմեր. Սիմեոն Դպիր Լեհացին (կամ Զամոստեացին), որ դեռևս 1608—1619 թթ. ճանապարհորդել է Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում, մոտիկից ու հանդամանորեն ծանոթացել հայաշատ կենտրոններին, թողել է մեծարժեք ու հետաքրքիր ուղեգրություններ և հավաստի տեղեկություններ գաղութահայության, մասնավորապես լեհ-ուկրաինական գաղութների մասին[1]։

Արժեքավոր ու հանդամանալից ժամանակագրություններ են թողել կամենեցի հայեր Հակոբը, Օգսենը և Հովհաննեսը, որոնց ձեռագրերն ուսումնասիրել ու հրատարակել են մեծավաստակ Ղևոնդ Ալիշանը[2] և Հ. Ս. Անասյանը[3]։

XVII դարի նշանավոր պատմագիր Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ նյութեր են բերված գաղութահայության և նրա հակառնիթորական պայքարի մասին։ Ուշագրավ են Զաքարիա Ագուլեցու օրագրությունները[5], Կարապետ Եղյանի հրատարակած «Բոնի միությունը»[6] ժողովածուի մեջ և այլ երկերում բերվող նյութերը։ Լեհ-ուկրաինական գաղթավայրերի մասին անհամեմատ շատ է գրվել հատկապես XVIII—XX դարերում, ստեղծվել է մի պատշաճ բազմաբեղուր գրականություն։ Նույնը կարելի է ասել մյուս գաղութների պատմության աղբյուրների ու գրականության մասին։ Հասկանալի է, որ գաղութահայության մասին գրված երկերը հեռու են գիտական ուսումնասիրությունների ժամանակակից պահանջների մակարդակից, դրանք ըստ մեծի մասի նկարագրական են, փաստագրական և ակնհայտ միտում ունեն բարձրացնել վերնախավերի դերը գաղութահայ կյանքում, սքողելով դասային ու դասակարգային ներհակությունները։

Նման իրավիճակը սովետահայ պատմագրությունից պահանջում էր հանդես գալ մարքսիստական ուսումնասիրություններով, ճիշտ մեկնաբանել գաղութահայության անցյալն ու ներկան, ուժեղացնել Սովետական Հայաստանի ազդեցությունը սփյուռքահայ զանգվածներում։

Այս հարցերը ժամանակին բարձրացրել են հայ մարքսիստները։ Այսպես, դեռևս 1924 թ. Ա. Մյասնիկյանն իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» ուշագրավ երկում բացահայտում է սփյուռքահայ կուսակցությունների քաղաքական ու դասակարգային էությունը, կոչ անելով հայ աշխատավորներին՝ իրենց բախտն ու պայքարը զուգորդել բանվոր դասակարգի պայքարին։ Մյասնիկյանը ցույց է տալիս, որ Սովետական Հայաստանը կենսականորեն շահագրգռված է պաշտպանել սփյուռքահայ աշխատավորության շահերը, նրանից ունենալով միայն մի սպասելիք՝ հավատ ու վստահություն սովետների երկրի նկատմամբ։ «Նրա սպասելիքը,— գրում է Մյասնիկյանը,— այն քաղաքական ու հասարակական համակրանքն է, որը հավատացած ենք, թե ունի ու պիտի ունենա այսուհետև գաղութահայ աշխատավորությունը դեպի

1 «Սիմեոն Դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն...», Վիեննա, 1936։
2 Ղ. Ա լ ի շ ա ն, Կամենից, Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ..., Վենետիկ, 1896։
3 «История Хотинской войны» Иоаннеса Каменецкого, ՊԲՀ, 1958, № 2, Հ. Ա ն ա ս յ ա ն, Յովհաննես Կամենացի, Պատմութիւն պատերազմի Խոթունու, Երևան, 1964։
4 Ա. Դ ա վ ր ի ժ ե ց ի, Պատմութիւն, Ամստերդամ, 1669։
5 «Զաքարիա Ագուլեցու օրագրությունները», Երևան, 1938։
6 «Բոնի միութիւն...», Ս. Պետերբուրգ, 1884։

պրոլետարիատի կոմունիստական հեղափոխությունն ու խորհրդային կարգերը»[7]։

Առանձին հիշատակության են արժանի նաև Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի հոդվածներն ու բրոշյուրները։ Դեռևս 1925 թ. հրապարակած «Գաղութահայ խնդիրներ» աշխատության մեջ նա անհրաժեշտ է համարում ամրապնդել կապը գաղութահայության հետ, բացահայտել հայ կուսակցությունների էությունը և նրանց նկատմամբ վարվող մեր քաղաքականության իմաստը։ «Գաղութահայ մեր քաղաքականությունը տվել է իր որոշ արդյունքները,— գրում է Աշոտ Հովհաննիսյանը,— մեր գործի պրոպագանդան որոշ նվաճումներ արել է արդեն։ Խորհրդային Հայաստանի կողմն է գաղութահայ լայն մասսաների համակրանքը»[8]։ Ա. Հովհաննիսյանը մերկացնում էր այն կեղծիքը, որի նպատակն էր գաղութահայության նկատմամբ Սովետական Հայաստանի բարյացակամ վերաբերմունքը բացատրել հայ բուրժուազիայից նյութական օգնություն ստանալու հանգամանքով։ «Չորս տարվա մեջ,— գրում էր նա,— մենք գաղութներից միայն գրոշներ է, որ ստացել ենք։ Ժողովրդական տնտեսության մեր ընդհանուր բալանսի մեջ այդ «օգնությունը» արհամարհելի մի մեծություն է։ Բայց բնավ արհամարհելի չէ այն աղմուկը, որ հանում են այդ «օգնության» առթիվ գաղութահայ բուրժուական մամուլն ու ազգային կազմակերպությունները»[9]։ Հեղինակը նշում է, որ գաղութահայ բուրժուազիան կողմնորոշվում է դեպի «իր» տեր երկրի բուրժուազիան, «յուրացնում է նույն երկրում տիրող բուրժուազիայի ընդհանուր օրիենտացիան»։ Ա. Հովհաննիսյանը վկայակոչում է Կարիկյանին, որը գրել է. «Եթե ամբողջ հոգևորությունը վերլուծենք, հակապոլշևիկյան կույր ատելությունն ուրիշ բան չէր գտնար, որ խառնված օտարամոլության հետ, տարված եվրոպական հակառուս քաղաքականությունն՝ իրենց իսկ ձեռքով հայրենիքը տկարացնելու, ազգը փառատելու կ

»[10]։

Գաղութահայ զանգվածների մեջ թշնամական ուժերի նման դիրքավորման պայմաններում դժվար էր ամրապնդել կապը սփյուռքի հետ։ Կուսակցությունները դեռևս չունեին հստակ կողմնորոշում հայրենիքի նկատմամբ, դիֆերենցացված չէր նաև մեր դիրքավորումը գաղութահայ կուսակցությունների նկատմամբ, հաճախ զրեթե հավասարության նշան էր դրվում նրանց միջև։ Հակամարտությունը սրվում էր գործի ու խոսքի մեջ բորբոքվող ծայրահեղություններով։ Բոլշևիկների պայքարը դաշնակցության դեմ և ազգամիջյան խաղաղություն հաստատելու ձգտումը անխուսափելիորեն ստեղծում էին այն խաբուսիկ տպավորությունը, որ իբր բոլշևիկները դեմ էին ազատագրական շարժումներին, որոնց իբր թե դիմավորագրվել էր միայն դաշնակցությունը։ Սփյուռքահայության համար դժվար էր ըմբռնել այն բարդ իրադրությունը, որ ըստեղծվել էր հեղափոխության տարիներին, երբ անհրաժեշտ էր վճռականորեն դատապարտել ազգամիջյան կռիվները, մերկացնել Անտանտի իմպերիալիստական ձգտումները, որոնք սքողված էին հայասիրության մասին փարիսեցիական հայտարարություններով և որոնց նպատակն էր հարվածել Սովետական Ռուսաստանին, տիրանալ Թուրքիային և Կովկասին։

---

7 Ա. Մարտունի, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924։
8 Ա. Հովհաննիսյան, Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925, էջ 3։
9 Նույն տեղում, էջ 4։
10 Նույն տեղում, էջ 13։

Հայ սփյուռքը գտնվում էր կապիտալիստական երկրներում, որտեղ սովետների նկատմամբ օտար տերերի հետ միասին թշնամական զիրք էին բռնել հայ բուրժուազիան, եկեղեցին և մտավորականության մի մասը։ Նրանք անվստահությամբ ու անբարյացակամությամբ էին նայում հայրենիքի նվաճումներին, չարախնդում դժվարությունների ու սայթաքումների դեպքում, հույսեր կապում նոր կարգերի տապալման հետ։ Նման պայմաններում, երբ «մեր կապը գաղութների հետ եղել է միակողմանի, մենք գործ ենք ունեցել անմիջապես միայն գաղութային բուրժուազիայի հետ»[11], երբ «գաղութահայ մասսաների հասարակական կարծիքի վրա ազդելու համար արտասահմանում մեր քաղաքականությունը չի ունեցել անմիջական ուղիներ»[12]. երբ աշխատավորության որոշ զանգվածներ ապակողմնորոշված էին ու խաբված, շատ դժվար էր սփյուռքի հետ հաստատել մշակութային ու գիտական կապեր, էլ չենք ասում մերձեցում կամ համագործակցություն, որին խոչընդոտում էր նաև տարեցտարի ուժեղացող մտավախությունը և ապա անհատի պաշտամունքի տարիներին գոյություն ունեցող անբարենպաստ պայմանները։

Եթե քսանական թվականներին մեր պատմաբանները խոսում ու գրում էին գաղութահայության մասին, ապա երեսնական թվականներին սփյուռքահայության թեման կարծես տանված էր գիտության օրակարգից։ Եվ դա հասկանալի է (հիշենք միայն Խանջյան—Զոպանյան կապերի մասին սկսած խոսակցությունները, մեղադրանքների հնչեղ սուլոցապարը, որը հասնում էր նաև պատմաբանների բավական սրված լսողությանը)։ Սփյուռքահայության ու գաղութահայության թեմաներով շղթաղվելը պայմանավորված էր ոչ միայն վերոհիշյալ հանգամանքներով. կային նաև օբյեկտիվ այլ պատճառներ, ինչպիսիք էին համապատասխան պատմագետ կադրերի սակավությունը, աղբյուրագիտական բազայի պակասությունը, հայ ժողովրդի պատմության մենագրական ուսումնասիրությունների ու աշխատությունների սահմանափակությունը, երբ դեռ հնարավոր չէր համարվում ինչպես կենդանի, առավել ևս մահացած գաղութների ուսումնասիրության ուժեր ու միջոցներ տրամադրելը։

Դրությունը զգալիորեն փոխվեց 40-ական թվականներին՝ Հայրենական պատերազմի ժամանակ և նրա հաղթական ավարտից հետո։ Հայ ժողովուրդը Սովետական Միության եղբայրական ժողովուրդների հետ միասին հերոսաբար կռվեց ֆաշիստական ագրեսիայի դեմ, ցուցադրեց նոր կարգերի ուժն ու պոտենցիալ անսպառ հնարավորությունները, նվաճելով ողջ աշխարհի աշխատավորության, այդ թվում նաև սփյուռքահայերի խորին համակրանքն ու վստահությունը։ Տասնյակ հազարավոր գաղութահայեր գենքը ձեռքին դուրս եկան ֆաշիզմի դեմ. սփյուռքում ծավալվեց հայրենասիրական աննախընթաց գործունեություն. կառուցվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, հայերը նետվեցին պարտիզանական կռիվների բոցերը՝ օգնելով սովետական բանակին և դզալով հայրենիքի ազատարար շունչը։ Փոխվեց գաղութահայության հասարակական կյանքում պայքարող ուժերի հարաբերակցությունը։ Սովետական Հայաստանը վերջնականապես ճանաչվեց որպես հայության կոնսոլիդացման միակ կենտրոն ու փրկության հանգրվան։ Սկսվեց հայրենադարձության հզոր շարժումը, որին ընդառաջ գնաց սովետական կառավարությունը։

11 Նույն տեղում, էջ 7, ընդգծումը հեղինակինն է։
12 Նույն տեղում, ընդգծումը հեղինակինն է։

Հարյուր հազարավոր հայեր բոնեցին տունդարձի ճանապարհը։ Այս խոշոր պատմական իրադարձությունները անհրաժեշտություն դարձրին սփյուռքահայության պատմության ուսումնասիրությունը, որի համար արդեն ստեղծված էին բարենպաստ պայմաններ։

Պետք է նշել, որ մինչև այդ էլ գաղութահայության պատմությունը աչքաթող չէր արված։ Այդ խնդրին ուղղակի ու անուղղակի անդրադառնում էին հայ ժողովրդի պատմության դասընթաց վարող դասախոսները՝ սկսած Լեոից և Մանանդյանից մինչև երիտասարդ գիտնականները։ Այդ հարցին հարևանցիորեն անդրադառնում էին մեր ժողովրդի պատմական կապերը և մասնավորապես հայ-ռուսական հարաբերություններն ուսումնասիրող գրեթե բոլոր ակադեմիկոսները, ակադեմիկոսներ Ս. Տ. Երեմյանը, Ա. Գ. Հովհաննիսյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Մ. Գ. Ներսիսյանը, գրականագետ Մ. Աբեղյանը և Ա. Կարինյանը, լեզվաբան Հր. Աճառյանը[13], ակադեմիայի թղթակից-անդամներ Լ. Խաչիկյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Վ. Ռշտունին, դոկտոր-պրոֆեսորներ Թ. Ավդալբեկյանը, Ս. Տեր-Ավետիսյանը[14], Ա. Գ. Աբրահամյանը, Զ. Տ. Գրիգորյանը, Կ. Գրիգորյանը, Վ. Պարսամյանը և ուրիշներ։

Տակավին 1943 թ. հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» ձեռնարկում (խմբագիրներ Մ. Ներսիսյան և Կ. Հաֆազսրյան) արծարծվում են գաղութահայության վերաբերող հարցեր։

Ուշադրության է արժանի այն գործունեությունը, որ ծավալեց Ա. Գ. Աբրահամյանը սփյուռքահայության հետ կենդանի կապեր հաստատելու և գաղութահայության պատմության ուսումնասիրության ուղղությամբ։ Նա եղավ Հնդկաստանում, Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Եգիպտոսում ու այլ երկրներում և 1944 թ. հրատարակեց մի հոդվածաշար՝ «Վեց ամիս Մերձավոր Արևելքում» խորագրությամբ[15]։ Նույն թվականին նա հրատարակեց զրիմահայության պատմությանը նվիրված, իսկ 1946 թ. Հաբեշստանի հայերի մասին գրված հոդվածը[16]։ 1946 թ. Լ. Մելիքսեթ-Բեկը հրատարակեց «Հին Ռուսիան և հայերը» ուսումնասիրությունը[17]։ 1948 թ. Հ. Թուրշյանն ավարտեց և ԳԱ պատմության ինստիտուտում պաշտպանեց դիսերտացիա՝ Հաբեշստանի հայ գաղութի ու հայ-հաբեշական կապերի մասին։ 1951 թ. Բ. Ն. Առաքելյանի և Ա. Ռ. Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս տեսավ «Հայ ժողովրդի պատմություն» դասագիրքը[18], որում խոսվում էր նաև հայ գաղթավայրերի կազմավորման և զարգացման մասին։ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորվելու 300-ամյակի առթիվ Հայաստանի գիտությունների ակադեմիան նախապատրաստեց ու հրատարակեց Ուկրաինայի ու Հայաստանի մի քանի գիտնականների հոդվածների ժողովածուն («Великая дружба»), որում զգալի տեղ է հատկացված հայ գաղութներին։ Առանձնապես հի-

13 Հ. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն (ձեռագիր, ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ), Նույնի «Կյանքիս հուշերից», Երևան, 1967։

14 Դեռևս 1940 թվականին Ս. Տեր-Ավետիսյանը հրատարակեց «Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի համար» աշխատությունը, տե՛ս Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հատ. 8, էջ 5—59։

15 «Էջմիածին» ամսագիր, 1946, № 2։

16 «Սովետական Հայաստան» ամսագիր, 1946, № 2։

17 Л. Меликсет-Бек, Древняя Русь и армяне, ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական աշխատություններ, հատ. 1, 1946։

18 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1951։

շատակության արժանի է ԳԱ թղթակից անդամ Լ. Ս. Խաչիկյանի «Հայ գաղութները Ուկրաինայում XVI—XVII դարերում»[19] ուսումնասիրությունը, ինչպես և Հ. Անասյանի, Ս. Մելիքսեթյանի, Ս. Մուրադյանի, Կ. Գրիգորյանի և Ե. Կիրիլյուկի հոդվածները հայ-ուկրաինական մշակութային կապերի մասին։

1955 թ. պատմության ինստիտուտը նախաձեռնեց մի գիտարշավ դեպի Աստրախան, Կազան և այլ քաղաքներ, որտեղ դիտաշխատողներ Վ. Կ. Ոսկանյանը և Վ. Ռ. Գրիգորյանը նյութեր հավաքեցին գաղութահայության վերաբերյալ և հրատարակեցին մի շարք հոդվածներ ռուսահայ գաղութի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի մասին[20]։ Այդ աշխատանքի մեջ ներգրավվեց աստրախանցի ուսուցիչ Ա. Յուխտը։ Նա գրեց մի քանի հոդված, ապա՝ թեկնածուական դիսերտացիա «Աստրախանի հայ գաղութը XVIII դարի առաջին կեսում» վերատառությամբ[21], որը և հաջողությամբ պաշտպանեց Երևանում։

1955 թ. կապեր հաստատվեցին նաև Ուկրաինայի պատմաբանների հետ, որոնք ակադեմիկոս Իվան Կրիպյակևիչի ղեկավարությամբ սկսեցին Ուկրաինայի հայ գաղութների վերաբերյալ նյութերի ուսումնասիրության գործը, շրջանառության մեջ դնելով Լվովի և Կիևի արխիվների բազմալեզու և անսպառ նյութերը[22]։

ՍՄԿԿ XX համագումարը շրջադարձային նշանակություն ունեցավ ինչպես գաղափարական ճակատում ընդհանրապես, այնպես էլ հասարակական դիտությունների ու պատմագրության մեջ մասնավորապես։ Ուժեղացավ հետաքրքրությունը սփյուռքահայության և հայ գաղութների նկատմամբ։ Անհրաժեշտություն զգացվեց բարելավել հայ ժողովրդի պատմության դասավանդումը բուհերում։ 1959 թ. պետական համալսարանում մտցվեց հայ գաղթավայրերի պատմության հատուկ դասընթաց, նույն թվականին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում կազմակերպվեց ՍՍՀՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմության սեկտոր, որը պետք է զբաղվեր այդ երկրների հայկական գաղթավայրերի, ինչպես և պատմական կապերի ուսումնասիրությամբ։ Սեկտորի ուշադրության կենտրոնում գրվեցին առաջին հերթին ռուսահայ գաղութները։ Դա միանգամայն արդարացի մոտեցում էր ոչ միայն այն նկատառումով, որ նյութերն ու սկզբնաղբյուրները գտնվում են մեր երկրի տարբեր քաղաքներում և անմիջապես կարող են դրվել դիտաշխատողների տրամադրության տակ, այլև այն պատճա-

---

19 Великая дружба, Ереван, 1954, այդ հոդվածը ավելի ընդարձակ հրատարակվեց հայերեն։ Տե՛ս Լ. Խաչիկյան, Ուկրաինայի հայ գաղութները XIV—XVII դդ., ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 4։

20 Վ. Ոսկանյան, Վ. Գրիգորյան, «Ս. Զալորյան», Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 11։ Նույնի «Ռուսաստանի հայ գաղութներում», նույն տեղում, 1956, № 9, «Աստրախանի հայկական Աղարարյան դպրոցի պատմությունից», «Սովետական մանկավարժ», 1956, № 3։ «Երկլեզու ռուս-հայկ. թերթը», «Սովետական գրականություն», 1957, № 3, «Ասիական երաժշտական հանդես»-ը և նրա հայկական երգերը, «Սովետական արվեստ», 1956, № 10։

21 А. И. Юхт, Армянская колония в Астрахане в первой половине XVIII в. Автореферат Ереван, 1959.

22 Առաջին հոդվածները տպագրվել սկսեցին 1958 թ. տե՛ս В. В. Грабовецкий, Армянская колония в Станиславе, «Известия» АН Арм. ССР, 1958, № 6. Н. К. Кривонос и В. В. Грабовецкий, Армянская колония во Львове, «Известия», 1958, № 12. Н. К. Кривонос, Армянская колония в Золочеве, «Известия», 1960, № 3 и др.

ռով, որ ռուսահայ գաղութները հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում կատարել են առավել նշանակալից դեր։ Ուսումնասիրության առարկա դարձան Նոր Նախիջևանը, Գրիգորիոպոլը, Աստրախանը և մյուս գաղութները։ Վ. Բարխուդարյանն սկսեց ուսումնասիրել Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը, որն արդեն լույս է տեսել առանձին գրքով։ Հրատարակության պրոցեսում է Գրիգորիոպոլի ամբողջական պատմությունն ընդգրկող աշխատությունը, որը նախապես պաշտպանված է որպես թեկնածուական դիսերտացիա[23]։ Աստրախանի հայկական գաղութի XVIII դարի առաջին կեսի տնտեսական ու իրավա-քաղաքական պատմությունը հետազոտել է Յուխտը[24], իսկ հետագա պատմաշրջանները դրադեցրել են Վ. Ա. Խաչատրյանին։ Նա XVIII դարի երկրորդ կեսի պատմության ուսումնասիրության արդյունքները ամփոփել է դեռևս ձեռագիր վիճակում գտնվող թեկնածուական դիսերտացիայի մեջ, տպագրել է մի շարք հոդվածներ[25] և այժմ աշխատում է գաղութի հետագա շրջանի՝ XIX—XX դարերի պատմության վրա։

Ռուսահայ գաղութների հասարակական-քաղաքական կյանքի այլևայլ հարցեր շոշափվել են Մ. Գ. Ներսիսյանի[26] և Զ. Տ. Գրիգորյանի[27] մի շարք մենագրություններում։ Ռուսաստանում գործող հայկական էսկադրոնի մասին նյութեր է հրապարակել Հ. Ն. Խաչատրյանը[28]։ Աստրախանի հայկական դատաստանագիրքը ուսումնասիրել է Ֆ. Պողոսյանը[29] և հրատարակել ծավալուն աշխատություն, այն նախապես պաշտպանելով որպես թեկնածուական դիսերտացիա։

1964 թ. հրատարակվեց Վ. Միքայելյանի[30] «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» ստվարածավալ մենագրությունը։ Այն ընդգրկում է Տավրիկ-

---

23 Ж. А. Ананян, К вопросу о заселении Юга России, «Известия», 1963, № 1; «Основание города Григориополя», «Известия», 1964, № 1; «Из истории общественной жизни гор. Григориополя», «Известия», 1964, № 3; «Григориопольская армянская колония», Автореферат, Ереван, 1964; его же, «Классовая борьба в Григориополе в конце XVIII в.», см. Сборник «Города феодальной России», М., 1966.

24 А. Юхт, Восточная торговля России в 30—40-х гг. XVIII в. и роль в ней армянских купцов; «Социальный состав населения Астраханской армянской колонии», «Правовое положение астраханских армян в первой половине XVIII в.», «Известия» АН Арм. ССР, 1956, № 8, 1957, № 7, 1960, № 12.

25 В. А. Хачатурян, Административно-правовое положение астраханских армян во второй половине XVIII века; «Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII века», «Известия», 1963, № 12, 1965, № 7. Նույնի՝ *«XVIII դարի Աստրախանի հայերի մշակութային կյանքի պատմությունից», ՊԲՀ, 1964, № 2։*

26 М. Г. Персисян, Из истории русско-армянских отношений, т. I, Ереван, 1965, т. II, 1960; «Отечественная война 1812 г. и народы Кавказа», Ереван, 1965.

27 *Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960։*

28 *Հ. Ն. Խաչատրյան, Արխիվային նոր նյութեր XVIII դարի հայկական էսկադրոնի մասին, ՊԲՀ, 1964, № 1։*

29 *Ֆ. Պողոսյան, Աստրախանի հայոց դատաստանագիրքը, Երևան, 1967։*

30 *Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964,* его же, «История армянской колонии в Крыму». Автореферат докторской диссертации, Ереван, 1965; его же, «К вопросу о грамоте Федора Дмитриевича». См. Археографический ежегодник, 1966 г., № 2. *Կաֆա քաղաքի անկման հարցի շուրջը, ՊԲՀ, 1964, № 2։* Նույնի *«Հայկական արտագաղթերը», «Սովետական Հայաստան», № 1, 1966։*

յան թերակղզու հայ գաղթավայրերի պատմությունը նրանց սկզբնավորումից մինչև XVIII դարի վերջերը, ավելի քան վեցհարյուրամյա ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, քաղաքական կյանքի ու մշակույթի պատմության բազմաթիվ կողմերով։ Այժմ Վ. Միքայելյանն ավարտում է Ղրիմահայ գաղութի վերջին և հետաքրքիր ժամանակաշրջանի (XIX—XX դդ.) պատմության շարադրանքը։ Վ. Դիլոյանը հրատարակել է արժեքավոր մենագրություն Լազարյանների գործունեության վերաբերյալ, բացահայտելով XVIII դարի երկրորդ կեսի ռուսահայ զանգվածների հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի կարևոր դրվագներ[31]։

Այսպիսով, եթե նկատի առնենք տարիների ընթացքում ռուսահայերի մշակութային կյանքի վերաբերյալ հրապարակված ուսումնասիրությունները և այդ թվում Կ. Գրիգորյանի՝ Պետերբուրգի հայ համայնքների պատմությանը նվիրված աշխատանքը, ինչպես և ռուսահայ մյուս գաղութների ուղղության պլանավորված և ուսումնասիրվող թեմաները, ապա կարելի է հուսալ, որ մոտ ապագայում հիմնականում կավարտվի մեր ժողովրդի XVIII—XIX դարերի պատմության համար շատ կողմերով կարևոր և այն համալրող ռուսահայ գաղթավայրերի ամբողջական պատմությունը։

Շոշափելի աշխատանք է կատարվել նաև Ուկրաինայի հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության ուղղությամբ։ Ինստիտուտը նախապատրաստել և տակավին 1959 թ. հոկտեմբերին անցկացրել է հայ-ուկրաինական պատմական կապերի ու գաղութների պատմությանը նվիրված անդրանիկ համատեղ գիտական սեսիա, որը հանրագումարի է բերել կատարված աշխատանքը, կոորդինացրել հետագա գործունեության ծրագիրը[32]։ Երկրորդ համատեղ սեսիան անցկացվեց 1962 թ. Կիևում և Լվովում, որտեղ ուկրաինացի և հայ պատմաբանները կարդացին շուրջ 30 գիտական զեկուցում և հաղորդում[33]։ Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ սեսիայում կարդացված զեկուցումները կերազանցապես նվիրված էին գաղութների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Առաջին սեսիայի նյութերը հրատարակվեցին Երևանում 1961 թ.՝ «Ուկրաինական ու հայ ժողովուրդների պատմական կապերն ու բարեկամությունը» ժողովածուի[34] մեջ, իսկ երկրորդ սեսիայի նյութերը Կիևում, 1965 թ., նույն խորագիրը կրող երկրորդ ժողովածուում[35]։

1967 թ. սեպտեմբերին հրավիրվեց հայ-ուկրաինական կապերին նվիրված երրորդ համատեղ սեսիան, որտեղ լսվեց 48 զեկուցում ու հաղորդում՝ կերազանցապես ուկրաինահայ գաղութների մասին։ Զեկուցումների թեզիսները հրապարակվեցին առանձին գրքույկով[36]։

---

31 Տե՛ս Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դ. երկրորդ կես), Երևան, 1966։

32 Научная сессия, посвященная историческим связам и дружбе украинского и армянского народов. Тезисы докладов. Ереван, 1959.

33 Научная сессия, посвященная историческим связам и братской дружбе украинского и армянского народов. Киев, 1962.

34 «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961.

35 «Исторические связи и дружба украинского и армянского народов», Киев, 1965.

36 «Исторические связи и дружба украинского и армянского народов», тезисы, Ере-

Պետք է նշել, որ համատեղ երեք սեսիաների կազմակերպումը ժողովածուների հրատարակությունը հանրագումարի բերեց և մեծապես խթանեց ուկրաինահայ գաղութների պատմության ուսումնասիրության գործը, որին լծվեցին ինչպես մեծավաստակ գիտնականներ, այնպես և երիտասարդ պատմաբաններ, արխիվների, թանգարանների ու գրադարանների աշխատողներ։ Բավական է հիշել Ուկրաինական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի, Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի, Ա. Բ. Կտրինյանի, թղթակից-անդամներ Լ. Ս. Խաչիկյանի, Լ. Մելիքսեթ-Բեկի, Վ. Կ. Զալոյանի, Մ. Ա. Ռուբաչի, պատմական գիտությունների դոկտորներ Ֆ. Պ. Շևչենկոյի, Դ. Ի. Միշկոյի, Մ. Կ. Իվասյուտայի, Ի. Գ. Շուլգայի, Ա. Գ. Աբրահամյանի, Ա. Ն. Մնացականյանի, Խ. Հ. Բարսեղյանի, Ս. Տ. Ալիխանյանի, Վ. Ա. Հակոբյանի, ինչպես և շնորհալի երիտասարդներ Յա. Դ. Բսանիչի, Յա. Ռ. Դաշկևիչի, Վ. Վ. Գոաբովեցկու, Վ. Ռ. Գրիգորյանի, Ս. Գ. Ամիրյանի, Ն. Կ. Կոիվոնոսի և ուրիշ տասնյակ գիտաշխատողների անունները, որպեսզի պատկերացվի կատարվող աշխատանքի ծավալը։ Այս տասնամյակի ընթացքում 1958—1967 թթ. բացի հիշված գիտական ժողովածուներից հրատարակվեցին մի շարք ուշագրավ հոդվածներ և գրվեցին մենագրություններ։ Յա. Ռ. Դաշկևիչը տպագրեց «Ուկրաինահայ գաղութները XV—XIX դդ. աղբյուրների և գրականության մեջ»[37] պատմագիտական արժեքավոր ուսումնասիրությունը։ Վ. Ռ. Գրիգորյանը ուսումնասիրեց Կիևի արխիվում պահպանված նյութերը և հրապարակեց «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները»[38]։ 1965 թ. Ն. Կրիվոնոսը ավարտեց «Լվովի հայ գաղութը XVII դարի առաջին կեսին» մենագրությունը և հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական դիսերտացիան[39]։ 1966 թ. Ուկրաինայում անցկացվեց գիտական սեսիա՝ նվիրված Լվովի հայ տպարանի հիմնադրման և հայ գրքի հրատարակության 350-ամյակին։

Անհրաժեշտ է նշել, որ բազմակողմանի և հանգամանորեն են ուսումնասիրվել Լվովի հայ գաղութի պատմության գրեթե բոլոր հիմնական ասպեկտներն ու ժամանակաշրջանները[40]։ Այժմ հնարավոր է ստեղծել ամբողջականաց-

---

ван. 1967. Առանձին ժողովածուով հրատարակության է նախապատրաստվում նաև երրորդ սեսիայի նյութերը։

37 Я. Р. Дашкевич. Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX вв., Ереван, 1962.

38 Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963։

39 Н. К. Кривонос, Армянская колония во Львове в первой половине XVII в., Автореферат, Ереван, 1965; ее-же, «К истории армянских ремесленников во Львове в XVII в.», ՊԲՀ, 1963, № 1.

40 Ուկրաինայի ու Հայաստանի պատմաբանները իրենց հանրապետությունների մամուլում ու գիտական ամսագրերում Լվովի գաղութի մասին հրատարակել են մի շարք աշխատություններ, որոնք արժանի են հիշատակության. դրանցից նշենք մի քանիսը.

Ակադ. Ի. Պ. Կրիպյակևիչ, Լվովի հայ գաղութի սկզբնավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, № 1։

Я. Р. Дашкевич. Армянское книгопечатание на Украине в XVII в., ՊԲՀ, 1963, № 4.

Е. А. Яцкевич. Армяне в Галиции, ՊԲՀ, 1960, № 3; его-же, «Памятники армянской культуры во Львове», Сборник «Исторические связи...», Ереван, 1961.

նող աշխատություն։ Բավականաչափ լուսաբանված է Կամենեց-Պոդոլսկի, ինչպես և Կիևի, Իվանովո-Ֆրանկովսկի (Ստանիսլավ), Սնյատինի, Կուտիի, Զոլոչևի, Բրոդիի գաղութների պատմությունը։ Մնում է ուսումնասիրել Լուցկի, Լիսեցի, Անդրկարպատյան Ուկրաինայի և մի քանի այլ երկրորդական գաղութներ, որից հետո հնարավոր կլինի սինթետիկ աշխատության ստեղծումը։ Քանի որ ուկրաինահայ գաղութների վերաբերյալ նյութերը գերակշռապես պահվում են Կիևի ու Լվովի արխիվներում և դրանցով գլխավորապես զբաղվում են ուկրաինական գիտնականները, Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի աշխատողները լրացնում ու հարստացնում են այդ գաղութների պատմությունը նոր նյութերով, ուկրաինացիների համար անմատչելի հայկական աղբյուրներով և ամբողջացնում ուսումնասիրությունները, կարծես հիմնապես գործը հանձնելով ուկրաինական պատմաբաններին։

Հարկ է նշել, որ առաջին քայլերն են արված ուկրաինահայ գաղութների պատմագիտության և աղբյուրագիտության ուղղությամբ։ Բացի Յա. Ռ. Դաշկևիչի և Վ. Գրիգորյանի հիշատակված գրքերից աղբյուրագիտական ու պատմագիտական բնույթի հոդվածներով հանդես են եկել ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչը[41], Մ. Կ. Իվասյուտան[42], Յա. Ռ. Դաշկևիչը[43], Վ. Ա. Հակոբյանը[44], Վ. Ռ. Գրիգորյանը, Մ. Հ. Դարբինյանը, Գ. Ս. Սիզոնենկոն, Պ. Խ. Պիրոժենկոն, Ն. Ֆ. Վրադին[45], Ջ. Գալստյան և Վ. Ոսկանյանը[46], որոնց հոդվածները տպագրվել են հայ և ուկրաինական պատմական կապերին նվիրված վերոհիշյալ ժողովածուներում և կամ ակադեմիաների ու արխիվային վարչությունների գիտական հանդեսների 1961—1967 թթ. համարներում։

Կարելի է ասել, որ հայ և ուկրաինացի պատմաբանների տասնամյա համատեղ աշխատանքի շնորհիվ ամուր հիմքերի վրա է դրվել հայ գաղթավայրե-

---

Յա. Դ. Իսահիչ, XV—XVIII դարերում Լվովում ստեղծված հայ-ուկրաինական կապերի բնութագրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, № 2, նույնի՝ «Յան Լասիցկին և նրա ակնարկը Ուկրաինայի հայերի մասին», «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962։

А. В. Овсенчук. Деятельность армянских художников во Львове в XV—XVII вв., ՊԲՀ, 1967, № 2.

Г. С. Сизоненко, Вірменскі прогресівні діячі науки та культури у Львові (XIX—XX ст.). Український історичний журнал, 1967, № 8.

41 И. П. Крипякевич, Садок Баронч историк армян бывшей Галиции. см. Сборник «Исторические связи...», 1961 г., его-же, «О синтетическом исследовании истории армяно-украинских отношений» (конспект доклада). տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3։

42 М. К. Ивасюта, Об исследованиях львовских советских ученых по истории украино-армянских исторических связях. «Вестник общест. наук» АН Арм. ССР, 1967, № 5.

43 Я. Р. Дашкевич, Вклад украинских историков... նույնի Армянский ученый Садок Баронч... ՊԲՀ, 1965, № 1.

44 В. А. Акопян, Армянские источники об Украине и украинцах, см. «Исторические связи...». 1961, его-же, «Հայ աղբյուրները ուկրաինական քաղաքների մասին», «Տեղեկագիր», 1967, № 2, «Մի ձեռագիր ռուս և ուկրաինական ժողովուրդների մասին», «Տեղեկագիր», 1964, № 3։

45 Н. Ф. Врадий, Актовые книги Львовской армянской колонии, ՊԲՀ, 1964, № 2.

46 Дж. О. Галстян, В. К. Восканян, Творча співдружність істориків України та Вірменії, Український історичний журнал, № 8, 1967.

րի մեծ ու կարևոր մասի պատմության ուսումնասիրությունը և արդեն ստացվել են շոշափելի արդյունքներ։

Նկատելի հետաքրքրություն է դրսևորվել նաև արտասահմանի հայ գաղթավայրերի նկատմամբ։ Դրանց մեջ առաջին հերթին հիշատակության արժանի են Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հայ ղանգվածների պատմությունը վեր հանելու ուղղությամբ կատարվող աշխատանքները։ Ինչպես տեսանք, բավական համակողմանի է մշակվում ուշ միջնադարյան Ռեչ Պոսպոլիտայի՝ Լեհաստանի և Ուկրաինայի հայկական գաղութների պատմությունը։ Մ. Հովհաննիսյանը լրացրել է կարևոր բացը՝ Լեհաստանի բաժինը։ Նա ուսումնասիրել է լեհահայ գաղութի առավել ուշագրավ ժամանակաշրջանի իրավա-քաղաքական վիճակը, հրատարակել մի շարք արժեքավոր հոդվածներ և ավարտել է «Ռեչ Պոսպոլիտայի հայկական գաղթավայրերի վարչա-իրավական դրությունը XVI—XVII դդ.» մենագրությունը[48]*։ Լեհ գիտնական Միրոսլավա Չակշևսկա-Դուբասովան Լյուբլինում 1965 թ. հրատարակեց «Չամոստիեի հայերը և նրանց դերը Արևելքի հետ Լեհաստանի ունեցած առևտրական ու մշակութային փոխանակության մեջ» ուշագրավ աշխատությունը*[49]*։ Նա եղել է Հայաստանում, աշխատել մատենադարանում և այժմ շարունակում է լեհահայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը։ Լեհահայերի հասարակական ու կուլտուրական կյանքի պատմության հարցերով են զբաղվում նաև Վ. Գրիգորյանը, Ջ. Գալստյանը և Գ. Պինգիրյանը։*

1720-ական թվականների ազատագրական շարժումների ժամանակաշրջանում Լեհաստանից Անդրկովկաս վերադառնալ ցանկացող հայերի մասին եղած մի խումբ փաստաթղթեր են հրատարակել պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը (առանձին գրքով)[50] *և Վ. Կ. Ոսկանյանն ու Վ. Մ. Մարտիրոսյանը (համատեղ հոդված-հրապարակումով)*[51]*։ Սակայն այն հարցը, թե Լեհաստանից հայկական սղնախներ վերադարձածների մի փոքր խումբը որքանո՞վ էր կապված լեհահայ լայն զանգվածների հետ, դեռևս մնում է չլուծված և լրացուցիչ աղբյուրներով հաստատելու կարիք ունի։*

Բուլղարահայերի պատմությամբ զբաղվում են Ռ. Հ. Խաչատրյանը և Ս. Հովնանյանը։ Ռ. Հ. Խաչատրյանի ուշադրության կենտրոնում են մասնավորապես բուլղարահայ հեղափոխական շարժումների, կոմունիստական կազմակերպության ու մամուլի պատմության հարցերը։

---

48 *Տե՛ս Մ. Հովհաննիսյանի հոդվածները «Լեհահայերի ինքնավարությունը XVI—XVIII դդ.» («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4), «Ռեչ Պոսպոլիտայի հայկական ինքնավար օրգանները» («Տեղեկագիր», 1964, № 8), «Լեհահայերի իրավական վիճակը XVI—XVII դարերում» («Տեղեկագիր», 1965, № 9)։ Նույնի* «Административно-правовое положение армянских колоний в Речи Посполитой в XII—XVII вв.». Автореферат, Москва, 1965 г.

49 *Այդ մասին տե՛ս Մ. Հովհաննիսյանի գրախոսականը* «М. Закшевска-Дубасова. Армяне Замостья и их роль в торговом и культурном обмене между Польшей и Востоком». *«Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1։*

50 *Տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը, Երևան, 1962։*

51 *Վ. Ոսկանյան, Վ. Մ. Մարտիրոսյան, Նոր վավերագրեր 1720-ական թթ. Հայ ազատագրական շարժման վերաբերյալ (ՊԲՀ, 1962, № 4)։*

1960 թ. հրատարակված «Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» աշխատության մեջ նա հանգամանորեն վեր է հանել «Կարմիր լուրեր» և «Նոր աշխարհ» լրագրերի գործունեությունը, ինչպես նաև հայ գանգվածների մասնակցությունը բուլղարահայ հեղափոխական շարժումների մեջ։ Այս հարցերը ավելի մանրակրկիտ ու խորացված իրենց արտահայտությունն են գտել նրա տակավին ձեռագիր մենագրության մեջ[52]։

Վերջերս լույս տեսավ Ս. Հովնանյանի ծավալուն մենագրությունը՝ նվիրված բուլղարահայ գաղութների XIX դարի երկրորդ կեսի պատմությանը։ Բուլղարիայի հայ գանգվածների պատմությունը ամբողջացնելու նպատակով հեղինակը շարունակում է իր ուսումնասիրությունները[53]։ Այստեղ հարկ է հիշատակել նաև առավելապես գրական ու մշակութային կապերին նվիրված Կ. Ճինգոզյանի 1966 թ. հրատարակած «Հայ-բուլղարական կապերի պատմությունից» աշխատանքը։

Իրեն քաջածանոթ Ռումինիայի և մերձակա հայ գաղթավայրերի պատմությունը շարադրել է տակավին ձեռագիր վիճակում գտնվող իր դիսերտացիոն աշխատության մեջ Ս. Քոլանջյանը։ Նա տարբեր հանդեսներում այդ թեմայով հրատարակել է մի շարք արժեքավոր հոդվածներ[54]։ Քոլանջյանը հնարավորության սահմաններում տալիս է նաև Ռումինիայի և հարակից երկրների հայ գաղթավայրերի պատմության ընդհանուր ուրվագիծը։ Ռումինահայերի պատմության հարցերն էր բարձրացնում նաև հանգուցյալ հայագետ Վ. Բենցիանուն[55]։

Արտասահմանի կապիտալիստական երկրների հայ գաղթավայրերից որոշ չափով լուսաբանվել են հունահայ գաղութի անցքերը։ Հայ-հունական ազատագրական շարժման վաղ ժամանակաշրջանի ու պատմական կապերի առանձին դրվագների լուսաբանմանն են նվիրված Հ. Անասյանի արժեքավոր մենագրությունը, ինչպես և նրա ու Օ. Թոփուզյանի հոդվածները[56]։ Գաղութի

---

52 Ռ. Հ. Խաչատրյան, Արտասահմանյան հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Երևան, 1960։ «Տիգրան Իսմիյան», «Լենինյան ուղիով», 1963, № 1, «Ստեփան Շահրապյան», ՊԲՀ, 1963, № 2, «Բուլղարիայի հայ կոմունիստական խմբերի առաջին կոնֆերանսը»։ «Տեղեկագիր», 1963, № 3, «Հայ կոմունիստական մամուլը Բուլղարիայում», տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմությունից», հատ. Ա, Երևան, 1963։

Р. Г. Хачатрян, Участие трудящихся армян в революционном движении и армянская коммунистическая печать в Болгарии в 1918—1923 гг. Автореферат, Ереван, 1964.

53 Տե՛ս С. В. Овнанян Роль армянских книгопечатников в распространении просвещения в Болгарии, Москва, 1966 (доклад в Софии).

54 Տե՛ս Ս. Քոլանջյանի Ռումինահայ մտքի դանձարան «Հայ մշակույթի տուն» («Էջմիածին», 1948, № 9—11), «Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան» («Էջմիածին», 1951, № 1—3, 7—8), «Ռումինահայ առաջին պարբերականի հրատարակման հարցի շուրջը» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 8) «Գեոլա հայաքաղաքը և նրա հայերեն ձեռագրերի ժողովածուն» («Բանբեր Մատենադարանի», 1962, № 6), «Տրանսիլվանիայի հայերի պայքարը իրենց ազգային ինքնուրույնության պահպանման համար» («Էջմիածին», 1964, № 12), նույնի «Армяне в Трансилвании и их культура». Տե՛ս «Литературная Армения», 1965, № 2։ նույնի «Армяне в Трансилвании (X—XVIII вв.)», Автореферат, 1965.

55 Տե՛ս Վ. Բենցիանու, Հայկական ծագում ունեցող բարձրաստիճան պաշտոնյաները հին Մոլդավիայում («Բանբեր Մատենադարանի», 1962, № 6), նույնի «Армянские колонии на территории Румынии по данным румынской топономики», ՊԲՀ, 1962, № 1.

56 Տե՛ս Հ. Անասյան, XVII դ. ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում,

1918—27 թթ. ընդհանուր պատմությանն է նվիրված Պ. Կոկինոսի ուսումնասիրությունը[57]։ Աշխատության մեջ ըստ ամենայնի ցույց է տրված հասարակական-քաղաքական հոսանքները, նրանց միջև տեղի ունեցող պայքարն ու հայ կոմունիստների գործունեությունը։ Հ. Ղաղարյանը «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ.» վերջերս հրատարակած (Երևան, 1967) ծավալուն աշխատության մեջ շարադրել է նաև Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայաշատ գաղութների պատմությունը։ Հեղինակը հանգամանորեն տվել է հայ զանգվածների սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքը։

Ֆրանսիայի հայության առաջավոր ջոկատի՝ հայ կոմունիստների դիմադրության տարիների գործունեությանն է նվիրված Տ. Դրամփյանի աշխատությունը[58]։ Ֆրանսահայ գաղութի 1920—1945 թթ. ամբողջական պատմությունը շարադրում է Ս. Հակոբյանը։

Ինչպես հայտնի է Հնդկաստանը հանդիսացել է այն երկիրը, որտեղ հանգրվանած հայկական օջախներում պատմական որոշ ժամանակահատվածում ծաղկում էր ապրում հայկական մշակույթն ու հասարակական-քաղաքական կյանքը։ Հատկապես XVIII դ. հնդկահայ շրջաններում համազգային խնդիրներ էին արծարծվում։ Այնտեղ, ինչպես և Ռուսաստանում, ձևավորվում է հայ ժողովրդի ազատագրական շարժման, նրա քաղաքական ինքնորոշման գաղափարախոսությունը։ Հարկավ մասնագետները քանիցս անդրադարձել են այդ ուշագրավ երևույթներին և այդ առիթով խոսել տեղի հայության մասին[59], սակայն մինչև վերջերս տակավին չէր ուսումնասիրվել հնդկահայ գաղութների առաջացման ու զոյատևման ամբողջական պատմությունը։ Ռ. Աբրահամյանը տարիներ առաջ ձեռնամուխ է եղել վաղուց հրատապ դարձած այդ խնդրին և հոդվածների տպագրելուց հետո, հրատարակության է հանձնել հնդկահայերի պատմության վերաբերյալ իր աշխատությունը[60]։

Ինդոնեզիայի հայկական գաղութի անցյալով է զբաղվում Ա. Հ. Անասյանը, որն առայժմ հրատարակել է մի հետաքրքիր հոդված[61]։

Երևան, 1961, նույնի Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 3)։ Օ. Թոփուզյան, Հայ-հունական կապերի պատմությունից («Սովետական Հայաստան», 1959, № 12)։

57 Տե՛ս Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից (1918—1927), Երևան, 1965։ նաև П. А. Кокинос, Из истории революционной борьбы трудящихся армян Греции, Автореферат, Ереван, 1960.

58 Տե՛ս Տ. Ս. Դրամփյան, Ֆրանսահայ կոմունիստները դիմադրության տարիներին, Երևան, 1967։

59 Տե՛ս Թ. Ավդալբեկյան, Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայ ինքնավարությունը XVIII դ. «Տեղեկագիր գիտության և արվեստի», 1930, № 1, А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Երևան, 1945, և այլն։

60 Տե՛ս Р. А. Абрамян, Армянский путеводитель по Индии в XII в. Տե՛ս «Բաներ Մատենադարանի», № 4, Ավետիս Կարբեցու պարսկա-հնդկական ուղեգրությունը. «Սովետական Հայաստան», 1960, № 1, XVII դ. հայկական աղբյուրները Հնդկաստանի և հայ-հնդկական հարաբերությունների մասին, «Армянские источники об Индии и армяно-индийских отношениях», 1964. «Армянские источники XVIII в. о Индии», Ереван, 1967.

61 Տե՛ս Ա. Անասյան, XIX դարի հայ ազատագրական շարժումները և Ինդոնեզիայի հայ գաղութը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 7)։

Նոր Ջուղայի գաղութի XVII դարի, ինչպես նաև վերջին շրջանի պատմության ընդհանուր հարցերը ուսումնասիրում է Վ. Բայբուրտյանը։ Նա հրատարակության է հանձնել «Նոր Ջուղայի հայկական գաղութը և իրանա-եվրոպական հարաբերությունները XVII դարում» աշխատությունը և այդ թեմայով հրատարակել մի շարք հոդվածներ[62]։

Հ. Մարտիրոսովը զբաղվում է Իրանի հայ զանգվածների ետհոկտեմբերյան ժամանակաշրջանի հարցերով։

Օ. Թոփուզյանը մշակել է եգիպտահայ գաղութի XIX—XX դարերի՝ 1850—1965 թթ. պատմությունը, թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել Սիրիայի և Լիբանանի հայերի պատմության մասին[63]։

Տարբեր երկրներում ծվարած գաղութների անցյալը պատկերող գործեր ստեղծելու հետ մեկտեղ սովետահայ պատմաբանները զգալի աշխատանք են ծավալել ժամանակակից սփյուռքահայ կյանքի ակտուալ առանձին պրոբլեմներ մշակելու ուղղությամբ։ Նկատելի են մասնավորապես արտասահմանյան հայկական կուսակցությունների ու կազմակերպությունների պատմությունը շարադրելու ասպարեզում կատարված աշխատանքները։ Դրանցից հարկ է հիշել Ջ. Կիրակոսյանի և Հ. Հակոբյանի «Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արևելքի երկրներում» (1960 թ.), Կ. Դալլաքյանի «Արտասահմանյան հայկական առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղված պայքարում» (1962 թ.) արժեքավոր աշխատանքները։ Այս թեմատիկայով գրված աշխատություններից պետք է նշել Լ. Խուրշուդյանի իր ծավալով ու ընդգրկումով աչքի ընկնող «Արտասահմանյան հայկական կուսակցությունները ժամանակակից էտապում» մենագրությունը։ Աշխատության մեջ հեղինակը լուսաբանում է դաշնակցության, հնչակյան ու ռամկավար-ազատական կուսակցությունների գործունեությունը, նրանց վերաբերմունքը խաղաղության, դեմոկրատիայի, սոցիալիզմի, ՍՍՀՄ-ի և Սովետական Հայաստանի հանդեպ։ Ինչպես նշված կուսակցությունների, այնպես էլ հասարակական-քաղաքական այլ կազմակերպությունների ու խմբակցությունների գործունեությունը քննարկվում է համաշխարհային երկու սիստեմների գոյության ու միջազգային հարաբերությունների լայն ֆոնի վրա[64]։

Սփյուռքահայ արդի հետադիմական փիլիսոփայության հիմնական դրույթների քննադատությանն է նվիրված Հ. Գաբրիելյանի «Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը» (1960 թ.) գիրքը։

Ինչպես հայտնի է, արտասահմանում լույս են տեսել և այժմ էլ հրատարակվում են բազմաթիվ թերթեր, ամսագրեր և այլ պարբերականներ։ Սփյուռքահայ մամուլի էջերում արտացոլվում է առանձնապես հայկական զանգվածների հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը, ուստի և ուսում-

---

62 Տե՛ս Վ. Բայբուրտյան, Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկական միսիոներների կազմակերպությունները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 9), «Նոր-Ջուղայի վաճառականությունը և արևմտա-եվրոպական կապիտալի տնտեսական էքսպանսիան Իրանում» («Պատմա-Բանասիրական հանդես», 1966, № 3) և այլն։

63 Տե՛ս О. Х. Топузян, Участие армян в национально-освободительном движении Сирии и Ливана (1925—1958 гг.), Автореферат, Ереван, 1964.

64 Լ. Ս. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964։

նասիրել պարբերական մամուլը, նշանակում է՝ նկատելի չափով լուսաբանել նաև տվյալ գաղութի պատմությունը։

Ուշադրության արժանի գործ է ակադեմիկոս Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» երկհատոր աշխատությունը, որի մեջ շոշափվել են նաև գաղութահայ կյանքին վերաբերող այլևայլ խնդիրներ։

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի համապատասխան բաժինը պատրաստում է հայ պարբերական մամուլի լիակատար ցուցակը, որտեղ ըստ ամենայնի կարտացոլվեն նաև արտասահմանյան պարբերականները։ Այդ, ինչպես նաև առանձին երկրների հայ մամուլին նվիրված թեմաների ավարտումը (Մ. Բարլոյան, Վ. Ղուկասյան և ուրիշներ) նկատելի չափով կնպաստեն հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությանը։

Այստեղ տեղին է հիշատակել Ս. Գասպարյանի «Սփյուռքահայ գաղթօջախները այսօր» (1962 թ.) աշխատությունը։ Նրա մեջ հեղինակը բարեխղճորեն հիշատակում է ժամանակակից սփյուռքահայ առանձին օջախների բնակչության քանակը, գործող բարեգործական ընկերություններն ու միությունները, բաղաքական կուսակցություններն ու խմբակցությունները, մամուլի օրգանները և տալիս նրանց համառոտ բնութագիրը։ Այդ աշխատությունը օգնում ու դյուրին է դարձնում հետազոտողների գործը, հնարավորություն է ընձեռում հեշտությամբ կողմնորոշվելու տարբեր երկրներում կամ գաղութներում ծավալված իրադարձություններում։

Այժմ սփյուռքահայ կոմիտեի և ուրիշ կազմակերպությունների միջոցով ստացվող առատ գրականությունն ու մամուլը, արտասահմանի հայկական շրջանների հետ աշխույժ երթևեկը, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի հրատարակությունը, հասարակագիտական մյուս պարբերականներում գրսի հայության կյանքի տարբեր կողմերն արտացոլող հոդվածների ու հաղորդումների երևան գալը առավել լայն հնարավորություն են ստեղծում գրելու ժամանակակից սփյուռքի պատմությունը։

Իր աշխատանքի բնույթով սփյուռքահայությանը մոտ կանգնած ու նրա առօրյային լավատեղյակ Վ. Համազասպյանը հատուկ հոդվածաշարով հանդես է եկել արտասահմանյան պարբերականներում («Լրաբեր», «Աշխարհ» և այլն)։ Շուտով հրապարակ կգա այդ նույն թեմային («Սովետական Հայաստանը և սփյուռքահայությունը») նվիրված նրա մենագրությունը։ Նույն պրոբլեմով է զբաղվում նաև Ս. Ալիխանյանը, որն ուսումնասիրում է Սովետական Հայաստանի ու սփյուռքի կապերի պատմությունը։

Մինչև վերջերս Սովետական Հայաստանի պատմության ձեռնարկներում ու դասագրքերում խոսք չէր լինում սփյուռքի մասին։ Դրվատանքի արժանի ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից վերջերս հրատարակված Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի 7-րդ գրքում (որն ընդգրկում է Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից մինչև Հայրենական պատերազմն ընկած ժամանակաշրջանը) հաղթահարվել է սովետահայ պատմագրության այդ թերությունը և առանձին բաժին է հատկացվել սփյուռքահայ պատմությանը[65]։

---

65 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 7, Երևան, 1967, էջ 539—605։ Հ. Ռ. Մելիք-Ադամյանը նախապես այդ նույն թեմայով հրատարակել էր մի շարք արժեքավոր հոդվածներ և գրել թեկնածուական դիսերտացիա։ Տե՛ս նրա «ՀՍԿ-ը և նրա դերը հայրենիքի հետ սփյուռքա-

«Սովետական Հայաստանը և սփյուռքահայությունը 1920—1940 թթ.» բաժնի հեղինակ Հ. Մելիքսետյանը շոշափել ու քննարկել է այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ Սովետական Հայաստանի կառավարության քաղաքականությունը գաղութահայության նկատմամբ, սփյուռքահայության կողմնորոշումը դեպի Սովետական Հայաստան, հայրենադարձությունը, Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) գործունեությունը հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի ամրապնդման գործում և այլն։

«Սփյուռքահայ մշակույթը» բաժնի հեղինակ Գ. Ստեփանյանը ամփոփ ձևով խոսում է մամուլի, գրականության, թատրոնի, երաժշտության ու կերպարվեստի մասին, բնութագրում հոգևոր կյանքը։

Հայ գաղթավայրերի ու սփյուռքահայության պատմության առանձին հարցերի, արվեստի, գրականության ու մամուլի վերաբերյալ հրապարակվել են բազմաթիվ հոդվածներ, որոնց հնարավոր չէ անդրադառնալ սույն հոդվածում։

Սփյուռքահայության նկատմամբ ընդհանուր հետաքրքրությունը, բնականաբար, հարուցում է հայ գաղթավայրերի ամփոփ ու ընդհանրացնող պատմություն ստեղծելու խնդիր։ Գիտական բարձր մակարդակով նման աշխատություն գրելը չափազանց դժվար, գրեթե անհնարին մի գործ է, քանի որ տակավին չեն ուսումնասիրվել առանձին գաղութները։ Եթե վաղ միջնադարից մինչև XVIII դ. ընդգրկող ժամանակաշրջանի գաղթավայրերի ուսումնասիրության համար բավական փաստական նյութ էր կուտակել և որոշ դյուրություն է ընձեռում Ա. Ալպոյաճյանի հայ գաղթականության պատմության եռհատորը[66], ապա հետագա պատմաշրջանի համար չկար նմանօրինակ որևէ աշխատություն։

Հայ գաղթավայրերի ընդհանուր պատմությունը շարադրելու պարտավորեցնող խնդրին ձեռնամուխ եղավ պրոֆ. Ա. Դ. Աբրահամյանը։ Հայ մատենագրությանը քաջատեղյակությունը և գաղութահայության պատմության դասընթաց վարելը նրան հնարավորություն տվեցին հաղթահարելու ծառացած դժվարությունները, հրատարակել «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» երկհատոր ուսումնասիրությունը, որի մեջ շարադրված է աշխարհի տարբեր մասերում սփռված ավելի քան երեսուն գաղութների համառոտ պատմությունը։

Հասկանալի է, որ հեղինակը հնարավորություն չի ունեցել հանգամանորեն հետազոտելու թեմային վերաբերող բոլոր նյութերն ու աղբյուրները, հետամուտ լինել գաղութների պատմության ողջ ընթացքին։ Աշխատության ընդգրկումն ու բնույթը նկատի ունենալով, Ա. Աբրահամյանը առաջին հատորի առաջաբանում գրում է. «...այս աշխատության մեջ պետք է որ սպրդած լինեն սխալներ ու անճշտություններ, բաց թողնված լինեն պատմական կարևոր դեմքեր և իրադարձություններ»[67]։ Այդ միանգամայն ճիշտ է, սակայն իր թերու-

---

հայ աշխատավորության կապի ամրապնդման գործում» («Տեղեկագիր», 1959, № 9), «Սովետական իշխանության առաջին քայլերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ» («Տեղեկագիր», 1960, № 3), «Սփյուռքահայության ներդաղթը Սովետական Հայաստան» (ՊԲՀ, 1961, № 2), «Հայ գաղթականության հարցը Ազգերի լիգայում» («Տեղեկագիր», 1961, № 9)։

66 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հատ. Ա. Բ և Գ-ի մաս 1-ին, Կահիրե, 1941—1961 թթ.։

67 Ա. Դ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության հատ. I, Երևան, 1964, էջ 14։

թյուններով հանդերձ պրոֆ. Աբրահամյանի երկհատոր աշխատությունը ներդրում է հայ պատմագրության մեջ և առաջընթաց մի քայլ է գաղթավայրերի գիտական պատմությունը ստեղծելու ճանապարհին։ Երկհատորյակը ոչ միայն ուրվագծում է հայ գաղթավայրերի ընդհանուր պատկերը և ձեռնարկի դեր կատարում ուսանողության համար, այլև նպաստում է առանձին գաղութների պատմության ուսումնասիրությանը։

Սովետահայ պատմագրության կողմից հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության ներկա վիճակը թույլ է տալիս որոշ ընդհանուր հետևություններ անելու և ցանկություններ հայտնելու։ Հայ գաղթավայրերի ուսումնասիրության համար նախ շատ կարևոր է լուծել մի շարք սկզբունքային մեթոդոլոգիական խնդիրներ, բացահայտել նրանց զարգացման օրինաչափությունները, ելնելով յուրաքանչյուր գաղութի տնտեսական ու քաղաքական կոնկրետ պայմանների գիտական հանգամանալից քննությունից։ Հատկապես թերի է մշակված մի շարք երկրներում գաղութների ձուլման ու վերացման պատճառների հարցը։ Այդ պրոցեսին հետևելու և իսկական պատճառները լուսաբանելու փոխարեն, ուսումնասիրողներն երբեմն միակողմանի ու անհիմն մեկնություններ են տալիս, հաճախ էլ բավարարվում են սոսկ կատարված իրողությունը արձանագրելով, առանց երևույթների հետնախորքը թափանցելու և պատմական պրոցեսը համակողմանի, հիմնավոր բացահայտելու։ Մեր ասածը կոնկրետացնելու նպատակով հիշատակենք մեկ երկրի օրինակ։ Բավական լավ ուսումնասիրված լեհ-ուկրաինական գաղութների պատմական արենայից վերանալու պատճառները, մեր կարծիքով, տակավին չեն բացահայտված։ Ավանդական պատմագրության մեջ նշվում է մի գլխավոր (իսկ ոմանց մոտ միակ) պատճառ՝ բոնի կաթոլիկացումը, որից հետո իբր թե Ռեչ Պոսպոլիտայի հայ գաղթավայրերը դադարում են գոյություն ունենալուց։ Մենք չենք բացառում ոչ բռնի կաթոլիկացման ու պոլոնիզացիայի փաստը և ոչ էլ դրանց ասիմիլատորական նշանակությունը, սակայն դրանք չէ, որ պետք է դիտվեն որպես որոշիչ պատճառներ։ Որոշ իմաստով դրանք նույնիսկ ոչ այնքան պատճառ են, որքան հետևանք։ Ասիմիլյացիայի պրոցեսը կախված է գաղութի մեծությունից, նրա մշտական համալրման կամ արտահոսքի չափից, երկրի ռազմա-քաղաքական ու տնտեսական վիճակից, մշակութային կյանքի մակարդակից, հյուրընկալող ժողովրդի վերաբերմունքից և նման այլ հանգամանքներից[68]։ Հիշենք, որ ղրիմահայ գանգվածները, որոնք ժամանակի ընթացքում վերագաղթել էին Տրանսիլվանիա, կարծես իսպառ մոռացել էին մայրենի լեզուն և խոսում ու անգամ գրում էին ղփչախ-թաթարական լեզվով (թեպետ մեսրոպատառ գրերով)։ Եթե ղրիմահայերը կանգնած էին թաթարների նման հետամնաց մի ազգության ձուլվելու ճանապարհին, ապա ինչքան դժվար էր ազգապահպանումը հայերի համար այնպիսի երկրում, ինչպիսին էր Ռեչ Պոսպոլիտան, որտեղ նրանք ունեին ոչ միայն ինքնավարություն, այլև արտոնություններ, որտեղ կար բարձր մշակույթ, առաջավոր գրականություն ու արվեստ, առևտրի ու արհեստագործության որոշ ապատություն, իշխող վերնախավի շարք մրտնելու գայթակղիչ հեռանկարներ։ Այս մի կողմից, մյուս կողմից Լեհաստանում

68 Այս հարցը հիշտ մեկնություն է գտել Մ. Լ. Հովհաննիսյանի տակավին չհրատարակված դիսերտացիայում, տե՛ս М. Л. Оганесян. Административно-правовое положение армянских колоний в Речи Посполитой в XVI—XVII вв. Москва, 1965 г.

աստիճանաբար զարգանում էին բուրժուական կապերը, անկում էին ապրում Արևմտյան Եվրոպայի հետ մրցության չդիմացող լեհական առևտուրն ու արհեստագործությունը, դրանց հետ միասին քաղաքները, որտեղից հեռանում էին հայերը, որոնք այլևս չէին համալրվում նոր գաղթականներով։ Մնացած հայերի համար լեհական լեզուն, գիրն ու գրականությունը կենսական պահանջ էին դառնում։ Ասենք նաև, որ հայրենիքը գործնական օգնություն չէր կարող հասցնել գաղութահայությանը՝ հայ մշակույթի ետ մնալու, գրականության պակասի (երբեմն և բացակայության) պատճառով։ Փոքր ու նվազ հայ գաղութը չէր կարող մրցությանը դիմանալ։

Նման պայմաններում շատ դժվար էր լեհ-ուկրաինական (և որոշ չափով նաև համաեվրոպական) կյանքի հորձանուտներում պահպանել իր ազգային կյանքը։

Սակայն պետք է նշել, որ անգամ այստեղ, չնայած հայ զանգվածի զգալի մասի հեռանալուն և ձուլման ուժեղ պրոցեսին, հայերի վերջնական ձուլման մասին խոսելը դժվար է։ Հիշենք լեհահայ գաղութի վերականգնման փորձերը XIX դ. վերջերին և XX դարում, երբ հայերը հանգանակություն էին հավաքում 1895—96 թթ. ջարդերից տուժած արևմտահայության համար, դիմումներ էին անում եկեղեցի և ինքնավար համայնք ստեղծելու մասին, ուսումնասիրում էին հայոց լեզուն ու պատմությունը, ստեղծում հայկական ցուցահանդեսներ ու թանգարան և այլն[69]։ Այս փաստերը ցույց են տալիս, որ գաղութների պատմությունը շատ կոնկրետ է, յուրօրինակ, ուստի և պահանջում է յուրաքանչյուրի բազմակողմանի ու խորազնին հետազոտություն։ Անհրաժեշտ է առանձին գաղութների ուսումնասիրությունն սկսել կազմավորման ժամանակներից, հետևել նրանց պատմական ուղու զիգզագներին, ցույց տալ մակընթացություններն ու տեղատվությունները, բացահայտել զոյատևման ապա և անկման պատճառները։ Նման հետազոտությունները կբացահայտեն ինչպես ընդհանուր օրինաչափությունները, այնպես և դրանց կոնկրետ արտահայտությունները՝ վեր հանելով պետությունների, դասակարգերի ու գործիչների դերն ու դիրքը գաղութների նկատմամբ, նրանց փոխհարաբերությունների սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմքերը և նրանց վարքագծի դրական ու բացասական հետևանքները։ Նման ընդհանրացումները կունենան և գիտական և քաղաքական նշանակություն՝ այժմյան գաղութահայության ու նրան հյուրընկալող երկրների փոխհարաբերությունները հասկանալու տեսակետից։

Հայ գաղթավայրերի պատմությունը ուսումնասիրելիս անհրաժեշտ է խուսափել արդեն նկատվող երկու ծայրահեղություններից՝ երբ գաղութի պատմությունը քննվում է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական ընդհանուր միջավայրից կտրված, կամ գաղութի պատմությունը տարրալուծվում ու կորչում է երկրի ընդհանուր պատմության ու երկրորդական նշանակություն ունեցող մանրամասնությունների մեջ։

Նկատվում է մեկ ուրիշ, նույնպես ոչ-ճիշտ տենդենց։ Ուսումնասիրողները խորանալով իրենց զբաղեցնող թեմաների մեջ ու տարվելով նրանով, երբեմն չափազանցությունների մեջ են ընկնում տվյալ գաղութի խաղացած դերի գնահատության հարցում։

69 Վ. Ոսկանյան, նյութեր լեհահայերի պատմությունից, ՊԲՀ, 1967, № 4.

Հայ գաղթավայրերի ուսումնասիրության պատմագրություն ստեղծելու նպատակով, կարծում ենք, ամեն մի գիտական աշխատության համար ընդունված աղբյուրների զրականության տեսություն տալու կարգը անհրաժեշտ կլիներ առավել պարտադիր դարձնել գաղթավայրերի պատմությամբ զբաղվող հեղինակների համար։ Ցանկալի է, որ նրանք ավելի հանդամանորեն շարադրեին տվյալ թեմայի շուրջը եղած աղբյուրների, նյութերի և ուսումնասիրությունների բաժինը։ Նկատի պետք է առնել, որ տվյալ գաղութի կյանքը հետազոտողից բացի, ուրիշ հեղինակ ի վիճակի չի լինի կատարելու այդ բանը։ Այս տեսակետից թերություններ ունեն հրապարակի վրա եղած և դեռևս ձեռագիր վիճակում գտնվող աշխատությունների մեծ մասը։

Հայ ժողովրդի համընդհանուր պատմության մեջ առանձին գաղթավայրերի դերն ու նշանակությունն ըստ ամենայնի կմշակվի ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից նախապատրաստվող Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակում։ Այստեղ համաձայն կտրվի տարբեր պատմաշրջաններում այս կամ այն երկրի պատմության հորիզոնում երևացող հայկական զանգվածի դերը, նրա նշանակությունը հայ ժողովրդի պատմության, նրա հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում։ Այդ առումով բազմահատորյակը մի առաջընթաց քայլ կլինի հայ գաղթավայրերի պատմագրության ստեղծման գործում։ Այն միաժամանակ ակնառու կդարձնի մեր թեմատիկայի թերի կողմերը և կուղղնշի հետագա ուսումնասիրությունների ոլորտը։